

դագրական մի տարբերակն է (հեղինակն էլ նույն այս իմաստն է գրել զրա մաս), գոցե սխալագրություն: Գրա վերջին կիր արմատը (ծագումն անհայտ) ունի բայական կեել ձևին համապատասխան «կրող» իմաստը: Իսկ աղաւթակեր բառը ուղղագրական տարբերակն է աղաւթկեար, աղաւթկեր բառի, որի վերջին կեար, կեր մասը փոխառություն է պահլավերենից՝ գրաբար «արար» և աշխարհարար բանող» նշանակությամբ (հմմտ. կերտ արմատը): աղաւթկեար կամ աղաւթկեր նշանակում է «աղթարար, աղթք անող»: նույն ակեր ձևավորի երկրորդ՝ ածականական արժեքի համար բերված է բաղակակեր բառը, որի ակեր մասը հեղինակը գիտում է որպես նույն վերջածանցը (միջին պարակերենից ծագած), ինչ որ կա աղանակեր և աղաւթակեր բառերի վերջին մասում. բայց այս բաղակակեր բառի կեր մասը մի ուրիշ արմատ է «ուտելիք, կերակուր» իմաստով (բաղակակեր «կոծեռն բառարանը» բացատրում է «առանց ստակի ուտող») և ունի հեղեմբոսական ծագում: Դա, ուրեմն, իմաստով ու ծագմամբ տարբեր է և՛ աղանակեր (արգենակիր) և՛ աղաւթակեր (աղաւթկեար, աղաւթկեր) բառերի վերջին մասից:

Հեղինակը երբեմն միևնույն ածանցը քննում է և՛ առանձին, և՛ ուրիշ ածանցների հետ միացած: Այսպես, օրինակ, ենթակայական դերբայի -ող ածանցը քննարկված է հետևյալ ձևավորով՝ -ացող (կագացող, դառնացող, լուսացող), -ակող (դաշնակող), -աղ (ծնաղ), -եցող (կամեցող), -ող (որսող, գանձող, արբեցող, այրեցող): Արանցից -աղ և -ող ձևերը գրաբարի համար միայն ուղղագրական տարբերակներ են: Մյուս երեք ձևերում՝ -ացող, -եցող, -ակող, կա նույն ածանցը. առաջին

երկուսի մեջ այն գրված է բայերի կատարյալի -աց, -եաց (եց) ածանցով հիմքերի վրա, իսկ երրորդի մեջ դաշնակ հիմքի վրա, որ և առանձին բառ է և դաշնակեմ բայի հիմքը (զրա վերջին -ակ մասը անվանական վերջածանց է): Այնպես որ -ացող, -եցող, -ակող բաղադրյալ բառամասերը ո՛չ նույն ածանցի ուղղագրական տարբերակներ են (ինչպես շնի, աշուի, ոտվի բառերի -ի, -ուի, -վի մասերը) և ո՛չ էլ բաղադրյալ ածանցներ (ինչպես՝ ուրիւն=ույր-իւն): Դրանց մեջ միևնույն -ող ածանցն է՝ միացած բայերի տարբեր տեսակի հիմքերին, ընդ որում կարող է միանալ նաև ուրիշ կազմության հիմքերին (տես-ան-ող, հատ-ույց-ան-ող=հատուցանող): Այնպես որ, ի արդարացված միևնույն -ող ածանցի քննությունը մի բանի անգամ՝ տարբեր տեսակի հիմքերի հետ: Հետաքրքրություն կարող էր ներկայացնել միայն -ող և -աղ ուղղագրական տարբերակների պատմական քննությունը. այդ մասին խոսում է հեղինակը 115—116 էջերում:

Ջ. Գրեպինի այս աշխատությունը, շնայած վերն արված գիտողություններին, մի արժեքավոր հետազոտություն է, պիտանի բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայոց լեզվի պատմությամբ: Հեղինակը շարունակում և զարգացնում է հայագիտության քննադատում XIX—XX դդ. Արևմուտքում ստեղծված լավագույն ավանդույթները: Սպասում ենք այս առաջադրում նրա նորանոր ուսումնասիրություններին:

Պ. ՇԱՐԱՐԵԱՆՅԱՆ

Վ. ԱՎԹԱՆԳԻՆՅԱՆ

Վ. Հ. ՓԱՐԹԱՄՅԱՆ, Հայ-անգլիական գրական առնչությունները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 333 էջ, գինը՝ 1 ռ. 38 կ.:

Հայ-անգլիական գրական առնչությունների պատմությունը հետաքրքիր և արդասավոր ուղի է անցել: Իր գոյության երկու դարերի ընթացքում այն բաղմակողմանի ծավալ ու հարուստ բովանդակություն է ստացել: Ծնունդ առնելով հայ նոր գրականության սկզբնավորման հետ միաժամանակ, այդ առնչությունները յուրովի նպաստել են մեր գրականության կազմավորման, բազմազան թեմաների ընդգրկման, մոտիվների հարստացման, լուսավորական և հումանիստական գաղափարների արժարժման գործին:

Հայ-անգլիական գրական կապերը ձևավորվել են հատկապես հնդկահայ գաղթախում

XVIII դարի երկրորդ կեսին առաջացած բուրժուական հարաբերությունների, հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության նոր վերելքի շրջանում, եվրոպական լուսավորական շարժման նպաստավոր հողի վրա: Այդ առումով նշանակալից է առաջին հայ պարբերականի՝ «Ազդարարի» հիմնադիր Հարություն Շմավոնյանի և հնդկահայ մյուս լուսավորիչների գերը, որոնք իրենց հայացքը սեւեռել էին դեպի եվրոպական կյանքն ու մշակույթը, հատկապես Անգլիայի առաջավոր մտավորականության արժարժած գաղափարները:

Իրավացի է Վարդան Փարթամյանը, որը նորերս լույս ընծայած իր «Հայ-անգլիական գրա-

կան առնչությունները» աշխատությունը սկսել է «Հնդկահայերը և անգլիական դրականությունը» հատուկ բաժնով:

Զխախտելով հասարակական զարգացման ժամանակաշրջանների փոխադարձ պայմանավորվածությունը, հեղինակը դիմել է հատկապես անգլիական այնպիսի հեղինակների, որոնց ստեղծագործությունները կարևոր դեր են կատարել երկու ժողովուրդների երկդարյա առնչությունների ընթացքում: Այդ են վկայում աշխատության՝ «Միլտոնի դյուցազնավեպի հայկական արձագանքները», «Ռոբինզոնը հայ դրական անդաստանում», «Սվիֆտի երգիծանքը հայ գրականագիտական մտքի գնահատմամբ», «Զարլզ Դիկենսը և հայ գրականությունը», «Կոնան-Դոյլը և հայ դետեկտիվ գրականությունը» և այլ գլուխներ: Չսահմանափակվելով միայն հետաքրքիր հարցադրումներով, գրականագետը իր ակտիվ վերաբերմունքն է ցույց տալիս բազմաբնույթ փաստերի նկատմամբ, կատարելով հավաստի եզրահանգումներ:

Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ հայ գրական-քննադատական միտքը լայնորեն արձագանքել է անգլիական գրականության արժարժած համամարդկային գաղափարներին, մարդասիրական ձգտումներին: Մանրակրկիտ ուսումնասիրելով անգլիական գրականությունից կատարված բազմաթիվ թարգմանությունները, այդ գրականության մասին եղած տարբեր բնույթի հոգվածները, որոնք մեծ մասամբ ցրված են հայ սյարբերական մամուլի էջերում, հեղինակը լայնորեն ներկայացրել է հայ-անգլիական գրական առնչությունների պատմությունը:

Վ. Փարթամյանի աշխատության մեջ ծանրության բեռները հիմնականում իրենց վրա են վերցրել արձակի գծով՝ «Վալտեր Սկոտը և հայ պատմավիպասանության մի քանի հարցերը», իսկ բանաստեղծության գծով՝ «Բայրոնի ավանդները հայ գրականության մեջ» շահեկան գլուխները:

Գրականագետը կանգ է առնում այն գնահատականների վրա, որ հայ գրաքննադատության կողմից տրվել են Վ. Սկոտի ստեղծագործությանը: Խ. Աբովյանի, Մ. Թադիագյանի, Մ. Մամուրյանի, Հ. Տեր-Ստեփանյանի, Րաֆֆու, Գր. Արծրունու, Մ. Աբեղյանի և ուրիշների գնահատականների հանրագումարը ընդհանուր առմամբ եղել է մեծ դրվատանք: Անդրադառնալով հայտնված կարծիքներին, Փարթամյանը հանգում է այն ճիշտ եզրակացության, թե «բազմազան կարծիքների մեջ անվերապահություն առանձնանում է պատմավեպի զարգացման գործում Սկոտի նորարարական դերի ըմբռնումը, նրա ստեղծագործու-

թյան ժողովրդականությունը» (էջ 170): Ինչ վերաբերում է Սկոտի երկերի ուղղակի ազդեցության հարցին, ապա գրախոսվող գրքի հեղինակը, շանտեսելով Վ. Սկոտի «Այվենհո» վեպի և Մ. Մամուրյանի «Հայկական նամականի» ու «Սև լեռին մարդը» վեպի միջև առկա շփման եզրերը, գտնում է, որ «Մամուրյանը «Այվենհո» համարում է Սկոտի «Նրաշակերտը» և այնտեղ տեսնում է գլխավորաբար պայթար ազգային ճնշման գեմ: Նա համակրանքով է ընդգծում վեպի գլխավոր հերոսի ազատասիրական ձգտումը, որ ի հայտ է գալիս քաղաքական ճնշման ու տգիտության խավարի պայմաններում» (էջ 179):

Խոսելով Րաֆֆու պատմագեղարվեստական երկերի վրա Սկոտի ունեցած բարերար ազդեցության մասին, Փարթամյանը արդարաւեիորեն գրում է. «Րաֆֆու «Սամվելում» արդեն նախընտրելի է համարվում սկոտյան ճշմարտացիությունը» (էջ 191), «Սկոտի նորարարության գլխավոր հատկանիշներից մեկը հենց այդ պատմական շրջանի ոգու, հոգևոր կյանքի ճշմարտացիությունն է» (էջ 194): Սկոտի ազդեցությունը փոխակերպելով իր մարտական ուժանտիզմով, Րաֆֆին մեծապես նպաստեց հայ պատմավիպասանության գեղարվեստական հնարավորությունների զարգացմանը:

«Բայրոնի ավանդները հայ գրականության մեջ» բաժնում հեղինակը հնարավորին չափով ընդլայնել է թեմայի ընդգրկման ոլորտը: Հայ-անգլիական գրական առնչությունների ողջ ճանապարհին, ըստ հեղինակի, անգլիական բանաստեղծության նկատմամբ հետաքրքրությունը մեզանում երբեք չի թուլացել: Ընդհակառակը՝ ժամանակի ընթացքում այն հարուստացել է նորանոր արտահայտություններով:

Նախքան Բայրոնին անցնելը, գրականագետը, շոտլանդացի հայտնի քնարերգակ Ռոբերտ Բենսոսի և իռլանդացի բանաստեղծ Թոմաս Մուրի որոշ ստեղծագործություններ բնութագրելով, ապացուցում է, որ նրանք իրենց քնարով հնչեցրել են նաև անտունիի և թշվառության մորմորը, և որ այդ բովանդակությունը ընդհանուր եզրեր ունի հայ քնարերգության համանման մոտիվների հետ: Անգլիական պոեզիան տվել է նաև այնպիսի գործեր, որոնց գաղափարական ուղղվածությունը համահնչուն է եղել մեր ժողովրդի հասարակական-քաղաքական ձգտումներին: Որպես օրինակ հետազոտողը մեջ է բերում Թոմաս Հուդի «Շապիկի երգը» բանաստեղծությունը, որն իր ժամանակին երգել են շարտիստները: Այն թարգմանվել է նաև հայերեն, երբ հայերի վիճակը ճգնաժամային էր թուրքական տիրապետության պայմաններում: Հայ գեղջկուհու ճախարակի երգի

նման, այստեղ էլ կարուհին է շապիկի երգը ձրգում. գիշեր ու ցերեկ կարելով, դարձյալ նա մնում է աղքատության ու թշվառության մեջ:

Բայրոնը անգլիական գրականության այն դեմքն է, որն ամենից շատ անձնական առընչություն է ունեցել հայ իրականության հետ: Վ. Փարթամյանը հենց այս խնդրի վրա էլ սե-վեռել է իր ուշադրությունը:

Խոսելով Ղ. Ալիշանի՝ Բայրոնից կատարած թարգմանությունների մասին և մեջ բերելով մի քանի բնորոշ հատվածներ, նա թարգմանչի կրճատումների պատճառը համարում է քաղաքական նկատառումները, քանի որ հանված էին տողեր, որոնք ուղղակի հասցեատերեր ունեին: Գրականագետը ապրումների նմանության դուգահեռներ է անցկացնում Բայրոնի «Պարապության ժամեր» և Սմբատ Շահազիզի «Ազատության ժամեր» ժողովածուների մի շարք բանաստեղծությունների միջև և դրանում ոչ թե ինչ-որ ուղղակի ազդեցություն է տեսնում, այլ եզրակացնում, որ պատանի Շահազիզը ցանկացել է նմանվել արդեն հանրահռչակ Բայրոնին: «Լեռնի վիշտը» պոեմի վերաբերյալ նա գրում է, որ այն իրոք իր շատ կողմերով նման է Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմին: Սակայն այդ նմանությունը առաջին հերթին արտահայտվում է կառուցվածքում՝ պատկերման այն կերպի մեջ, որով երկու գրողների հերոսները ճամփա են դուրս գալիս և իրենց տեսածի մասին մտորում, հասարակական հնչեղությամբ հարցեր արձարծում: Պատահական չէր, որ, ավելի ուշ, Բայրոնը Թումանյանի համար հիմնականում «համաշխարհային վշտի երգիչ» էր ինչ վերաբերում է Թումանյանի ապրած ռա-յ-

րոնական շրջանին», ապա այդ հանգամանքը գրականագետը մեկնաբանում է Թումանյանի ստեղծագործության մեջ արտահայտված աղա-տության ձգտմամբ ու կաշկանդումների դեմ բողոքով, կյանքից անբավարարված լինելու տրամադրությամբ:

Վ. Փարթամյանը ծանրանում է նաև Մ. Արեղյանի «Ռոմանտիզմը» ուսումնասիրության վրա, որտեղ Բայրոնը զնահատվում է ոչ միայն որպես ամենամեծ ռոմանտիկ, այլև որպես բայրոնիզմին անուն տվող:

Փարթամյանը անդրադառնում է Բայրոնին Արշակ Չոպանյանի տված բնութագրին ևս, ինչպես նաև հանգամանորեն դրվատում Ռուբեն Որբերյանի նշանակալի վաստակը Բայրոնի ստեղծագործության համակողմանի և խոր հետազոտման գործում:

Ի պատիվ հեղինակի պետք է ասել, որ ամբողջ նյութը մատուցվում է քննադատիչ հարցերի խոր իմացությամբ, վերլուծական պատշաճ մակարդակով:

Դիտողության կարգով հարկ ենք համարում նշել, որ հեղինակը, ցավոք, չի անդրադարձել Շեքսպիրի ստեղծագործությանը: Մեր կարծիքով, եթե գրականագետը Շեքսպիրի ստեղծագործությունը դարձներ իր աշխատության գլխավոր լծակը, ապա մեծագրությունում բարձրացված հարցադրումները առավել ծանրակշիռ կլինեին:

Վ. Փարթամյանի աշխատությունը շահեկան գործ է մեզանում քիչ ուսումնասիրված այնպիսի մի ոլորտում, ինչպիսին հայ-անգլիական գրական առնչությունների բնագավառն է:

Տ. ԽՈՐՇԻԴՅԱՆ